ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

23/02/2015թ

ՈՐՈՇՈՒՄ N02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԵՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոյակերտ գյուղական համայնքի ավագանին որոշում է .

1. Նոյակերտի գյուղական համայնքային սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի ջրագծերը 15,0 մլն. դրամ հաշվեկշռային արժողության համակարգերը մինչև 2035թ.-ի հուլիսի 01-ը, Հայասատանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագրով հանձնել «Հայջրմուղկոյուղի » փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Նոյակերտ գյուղական համայնքի ղեկավար ՝ պարոն Հովհաննես Հարությունյանը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում « Հայ ջրմուղ կոյուղի » ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել , սույն որոշման առաջին կետում նշված պայմանագիրը (պայմանագրերը) կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

Քվեարկեցին- ավագանու անդամներ

1. Յ.Հարությունյան-կողմ

2. Ա.Ասլանյան-կողմ

3. Վ.Դումանյան-կողմ

4. Ս.Մադոյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ